ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ
ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԿ

REPUBLIC OF ARMENIA
"STUDENT SPORTS
FEDERATION" NGO

**Երևան 0052, Ծարավ Աղբյուր 55/11, 35**
**հեռ. +(37494) 008458, +(37496) 007447**
**e-mail: armssf.info@gmail.com**

**Tsarav Aghbyur 55/11, 35 YEREVAN, 0052,**
**tel. +(37494) 008458, +(37496) 007447**
**e-mail: armssf.info@gmail.com**

***№ 51 «26» «06» 2025թ.***

ԱՁ Վարդուհի Թովմասյանց Աբրահամի
ք.Չարենցավան 5 թաղ
ՀՎՀՀ՝ 40649637
Հեռ՝ 077657512
Էլ.հասցե՝ vtovmasyanc@mail.ru

Ծանուցում

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ տիկին Թովմասյանց,

«Ուսանողական մարզական ֆեդերացիա» ՀԿ և ԱՁ Վարդուհի Թովմասյանց Աբրահամի միջև 20.06.2025թ. կնքվել է «ՀՈՒՄՖ–ԳՀԱՊՁԲ-25/2» պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 3,153,600 (երեք միլիոն մեկ հարյուր հիսուներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

2025 թվականի մայիսի 21-ին հայտարարվել է ՀՈՒՄՖ–ԳՀԱՊՁԲ-25/2 ծածկագրով սպորտային հագուստ, կոշիկ – այլ պարագաների գնման մրցույթ, որտեղ սահմանվել է ամբողջական սպորտային համազգեստ՝ լրակազմ, ինչպես նաև պարտադիր պայման է հանդիսացել՝

-ներկայացված ապրանքները պետք է լինեն չօգտագործված,

-ժամկետի սղության պատճառով պայմանագրի կնքելուց հետո մատակարարը մինչև 3 օրվա ընթացքում պարտադիր պետք է համաձայնեցնի նմուշը ՊՍ ղեկավարի հետ:

Վերը նշված պայմանը արձանագրվել է նաև 20.06.2025թ-ին կնքված պայմանագրի մեջ, որը հաստատվել է ԱՁ Վարդուհի Թովմասյանց Աբրահամի /այսուհետ՝ Կատարող կամ Մասնակից/ կողմից, որպես հաղթող մասնակից:

Սակայն, պայմանագիրը կնքելուց հետո Պատվիրատի ևս մեկ ծանուցմանը /21.06.2025թ-Ծանուցում 2/ Կատարողը պատասխանել է «Ստացա Ձեր նամակը, երեք աշխատանքային օր

հետո կպատասխանեմ» և սահմանված ժամկետում չի ներկայացրել պատվերի նախնական նմուշը:

Հարկ եմ համարում նշել, որ Մասնակիցը առնվազն 3-4 անգամ ծանուցվել է արդեն իսկ հրապարակային հրավերի մեջ արձանագրված պայմանի վերաբերյալ և ունեցել է բավարար ժամանակ հարցումների և պարզաբանումների համար: Ինչպես նաև վերջինիս կողմից գործողությունների իրականացման ժամանակ պահպանել է առավելագույն ժամկետները ժամանակ շահելու համար, որի պատճառով մրցույթը արհեստականորեն երկարել է:

ՀՀ քաղաքացիական օրենագրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամաբ) կատարելը: Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, և հիմք ընդունելով «Ուսանողական մարզական ֆեդերացիա» ՀԿ-ի խորհրդի արձանագրային որոշման Պայմանագիրը միակողմանի լուծելու առաջարկը, «Ուսանողական մարզական ֆեդերացիա» ՀԿ-ն միակողմանի հրաժարվում է 20.06.2025թ. կնքված «ՀՈՒՄՖ–ԳՀԱՊՁԲ-25/2» պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրից՝ համարելով այն ամբողջովին լուծված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընքացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 432,000 (չորս հարյուր

երեսուներկու հազար) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 648,000 (վեց հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

Նշված բոլոր գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարման հանձնարարականների բնօրինակները ներկայացնել «Ուսանողական մարզական ֆեդերացիա» ՀԿ, ք.Երևան, Նալբանդյան 128:

ՀՀՈՒՄՖ ԱՐՍՍՓ ARSSE 00417301

ՆԱԽԱԳԱՀ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ